Առցանց սեմինարների (վեբինարների) շարք ԲՈՒՀ-երի ուսանողների և սկսնակ մասնագետների համար

Ջրային անվտանգությունը Հարավային Կովկասում և դրանից դուրս. հմտությունների ձևավորում ջրային ոլորտում ապագա առաջնորդների համար

կլիմայի դիմակայունություն | տնտեսություն | ապրուստի միջոցներ | էկոհամակարգեր | առողջություն

Ընդհանուր նկարագիր

ԱՄՆ ՄԶԳ Հարավային Կովկասի տարածաշրջանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագիրը (ՀԿՋՌԿ) մեկնարկում է «**Ջրային անվտանգությունը Հարավային Կովկասում և դրանից դուրս. հմտությունների ձևավորում ջրային ոլորտում ապագա առաջնորդների համար»** խորագրով վեբինարների շարք՝ նախատեսված ջրային ռեսուրսների կառավարման ոլորտին առնչվող հարցերով հետաքրքրված ուսանողների և երիտասարդ մասնագետների համար: Վեբինարների այս շարքի շրջանակներում առաջարկվում են դասընթացներ ջրային ռեսուրսների կառավարման հիմնական սկզբունքների, գլոբալ և տարածաշրջանային մարտահրավերների և լավագույն փորձի վերաբերյալ՝ այսկերպ զարգացնելով մասնակիցների՝ ջրային ռեսուրսների կայուն կառավարման կարողությունները:

ՀԿՋՌԿ ծրագրի մասին

ԱՄՆ ՄԶԳ Հարավային Կովկասի տարածաշրջանային ջրային ռեսուրսների կառավարման ծրագիրը նպատակ ունի խթանել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, արդյունավետ անդրսահմանային համագործակցությունը, ինչպես նաև ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը Հարավային Կովկասի տարածաշրջանում: Համագործակցելով պետական կառույցների, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության, գիտական և ջրային ռեսուրսների կառավարման հաստատությունների հետ՝ ծրագիրը խթան կհանդիսանա շրջակա միջավայրի պահպանության և ջրային ռեսուրսների կառավարման ընդհանուր առաջնահերթությունների շուրջ տարածաշրջանային համագործակցության համար՝ խրախուսելով ջրային ռեսուրսների կառավարման քաղաքականության շրջանակների ներդաշնակեցում և նոր տեխնոլոգիաների ներդրում՝ միտված սոցիալական, տնտեսական, բնապահպանական և կլիմայի փոփոխության արձագանքման նպատակների իրագործմանը, ինչը կարող է նպաստել հարավկովկասյան տարածաշրջանի բարգավաճմանը և կայունությանը,

միաժամանակ օրինակ ծառայելով տարածաշրջանային համագործակցության այլ հաջողված նախաձեռնությունների համար:

Նպատակ

Վեբինարների շարքը նպատակ ունի զարգացնել ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում ուսանողների և սկսնակ մասնագետների գիտելիքներն ու հմտությունները՝ տրամադրելով համապարփակ պատկերացում հիմնական սկզբունքների, մարտահրավերների և լավագույն փորձի վերաբերյալ՝ զարգացնելով նրանց կարողությունը արդյունավետորեն ներդրում ունենալ կայուն ջրային ռեսուրսների կառավարման մեջ:

Ո՞վ կարող է մասնակցել

Շարքը նախատեսված է բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտուրայի ուսանողների, ինչպես նաև Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից ջրային ռեսուրսների կառավարման տարբեր ասպեկտներով հետաքրքրված երիտասարդ մասնագետների համար:

Թեմաներ և բանախոսներ

Վեբինարների ընթացքում կներկայացվի քննարկման թեմաների լայն շրջանակ՝ միջազգային և տեղական փորձագետների մասնակցությամբ: Թեմաները կներառեն հետևյալ ոլորտները.

- Ջրային անվտանգության ներածություն
- Ջրային դիվանագիտություն և անդրսահմանային համագործակցություն
- Ջրային ռեսուրսների կառավարում և քաղաքականություն. Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի ապակենտրոնացում
- Կլիմայի փոփոխություն և ջուր
- Աղետների ռիսկի կառավարումը (ԱՌԿ) ջրային ոլորտում
- Գենդերային և սոցիալական ներառականությունը ջրային ռեսուրսների հասանելիության և կառավարման համատեքստում
- Ջուր-Էներգիա-Սնունդ-Էկոհամակարգեր կապը
- Ջրամատակարարում և ջրահեռացում (WASH), ջրի որակ և աղտոտում
- Ջրի տնտեսագիտություն/ ջրային ռեսուրսների արժևորում
- Բնահեն լուծումները ՝ ջրային ռեսուրսների կառավարման համատեքստում

Կարևոր մանրամասներ

Ժամանակ. Աշխատանքային հանդիպումները կանցկացվեն 2024թ. դեկտեմբերից մինչև 2025թ.ի փետրվար՝ յուրաքանչյուր չորեքշաբթի, ժամը՝ 14:00-ից 15:00՝ տոների ընթացքում ընդմիջումով:

Ձևաչափ. Առցանց (Zoom)

Աշխատանքային լեզու. Անգլերեն

Հավաստագրում. Շարքը հաջողությամբ ավարտող մասնակիցները կստանան մասնակցության հավաստագիր:

Ինչպես գրանցվել

Հետաքրքրված ուսանողները և երիտասարդ մասնագետները կարող են գրանցվել լրացնելով մեր առցանց ձևը, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://forms.office.com/e/S8yytJtERU: Գրանցումը բաց կլինի մինչև 2024թ. նոյեմբերի 25-ը: Տեղեկացնում ենք նաև, որ մանրամասն ժամանակացույցը և կազմակերպչական տեղեկատվությունը կտրամադրվեն գրանցումից հետո:

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել մեզ հետ mkugrekhelidze@scrwm.org հասցեով (Մերի Քեյթ Ուգրեխելիձե, ԱՄՆ ՄՁԳ ՀԿՁՌԿ ծրագիր):

Միացե՛ք մեզ: Ուրախ կլինենք ողջունել ձեզ այս կարևոր ուսուցողական փորձառության շրջանակներում: